4. ԹՈՒՐ ՈՒ ԹԱՄՔ

Կէղնի չէղնի մե հատ թագավոր կէղնի։ Էդ թագավորին իրեք հատ տղա կէղնի։ Էդ իրեք տղեն ա կըսին.— Հայրի՛կ, մղի հ՚որի՞ չըս կարքի։

Ըսեց.— Բալե՛ք ջան, հ՚ելեք իրեքով լե գացեք, ձղի ախճիկ դտեք, ես չեմ կանա կարքի։

Իրեք տղեներ հ՚ելան ձիանք հեծան ու գացին։ Գացին, իրեք հատ ճամփա էկավ ռաստ։

Թուր ու թամքն (պզտիկ ախպեր)[1] ըսեց.— Ջոջ ախպեր, դու իտա ջոջ ճամփով գնա, միջնեկ ախպեր, դու իտա միջնեկ ճամփով գնա, ես լե պզտիկ ախպերն եմ, իտա պզտիկ ճամփով կէթամ։

Իրեք ախպերն էր, իրարուց բարև մնա էղան ու գացին։ Ջոջ ախպոր ճամփեն ու միջնեկ ախպոր ճամփեն մեկնավ։ Թրխ ընդոնք դենի էթան։ Թուր ու թամքն էր, գնաց գնաց, տեսավ, օր հանդա մե հատ ախճիկ ձեռ դրե ճակտին՝ կիշկա սար ու ձոր։

Ըսեց.— Բարև քզի, ախճի։

Ախճիկն էր ըսեց.— Օձն ուր պորտով, հավքն ուր թևով իտա տեղան չը գտնվեր էր, դու ի՞մալ գտվար։ Հլա իշկա Սև սար, մկա Սև դև կիգա, եսիմ քըզիկ ի՛նչ կէնա։

Տղեն էր քաշեց թուրն ու հ՚ելավ թրխ սար։ Տեսավ օր հանդա Սև դև էկավ։ Ջախչի քար էրեր ա թրխբես ու կիգա։ Ջուն ու ջանավար լցե հ՚ետեն ու կիգա։

Դենն էր տղին տեսավ, ըսեց.— Օ՞, ջուն ու ջանավարներ, հ՚ըսօր ձղի պռագնիկ. ջուտուց հողածինի միս չենք կերեր ի։

---

1 Բացատրությունը բանահավաքինն է (Ծ. Կ.)։

Տղեն էր ուր թուր քաշեց, հ'ելավ կայնավ դևի հ'առեջ։

— Կիր, նո՛ր գոհացի։—Ըսեց.—Դ'և, գուրզ իմն ա, թե՞ քունն ա։

Դևն էր ըսեց.— Գուրզ քունն ա, դու իս էկե իմ հողի մեջ։

Տղեն էր, գուրզն թալեց, դևին էսքեց։ Յոթ անգաճ լե կտրեց, շարեց խայիշ ու էկավ։ Էկավ տեսավ, օր հանդա մե ախճիկ ձեռ դրե ճակտին, կիշկա սար ու ձոր։

Ախճիկն էր, ըսեց.— Տղա՛, մկա Սև դև կիգա, եսիմ քզի ի՛նչ էնա։

— Է՞, ախճի, իշի բալկոնից, արի էրթանք տուն։

Ախճիկն էր, ուրխըցավ, ուրին բալկոնից թալեց տուն։

Տղեն էր, դևու անկճներ հանեց, գրեց ախճկա հ'առեջ, ախճիկ ուրխըցավ։ Հ'ելավ թագավորի լայեղին բաներ բերեց դրեց։ Թուր ու թամքն ու ախճիկն էր՝ կերան, խմին, հ'ելան պառկան։

Թուր ու թամքն էր, թուր քաշեց ուր ու ախճկա արանք։ Ախճիկն էր ըսեց.— Տղա՛, իմ խոբոտութեն չըս հավնի՞, իմ կարողութենին չըս հավնի՞, հ'որի՞ թուր քաշիս դնիս իմ ու քու արանքը։

— Է՞, ախճի՛կ, մուրազ ունիմ՝ կը կատարեմ։

Ջոջ ախպոր մատնիք տղի կուշտն էր. հանեց, էսքեց ախճկա մատ, ըսեց.— Դու իմ ջոջ ախպոր կնիկն ես։

Լուսն օր բացվավ, տղեն էր, հ'ելավ շորեր հագավ, իշկեց։— Ախճի, էն ի՞նչ օթախ ա էնտեխ կէրևա։

Ըսեց թե.— Էնի լե իմ միջնեկ քուրոջ օթախն ա։

Ըսեց.— Ախճի, մացի բարով, ես չորս օրից ետ կիգամ։

Գնաց տեսավ օր հանդա միջնեկ ախճիկն է, նստե ծառի հով՝ դիլա։

Ըսեց.— Ախճի, հ'ո՞րի գիլաս։

Ըսեց.— Ի՞նչ էնիմ՝ չը լամ. դու հողածին էր, տեսա՝ սիրտս մոմռաց, լացի։— Ըսեց.— Տղա՛, իտա Բոզ սարն կը տեսնա՞ս, մկա Բոզ դևն կիգա՝ եսիմ քզի ի՛նչ էնա։

Ըսեց.— Իշկա, իտա լե Սև դևի անգճներն ա, Բոզ դև լե ըդրա Ճամփով կը տանիմ։

Տղեն էր, քաշեց թուր, հ'ելավ Բոզ սար, գնաց տեսավ օր՝ հանդա Բոզ դև ջուն ու ջանավար իսկե հ'ետևն ու կիգա։ Դևն էր, տղին տեսավ ըսեց.— Օ՞..., ջուն ու ջանավարներ, ձզի պռաղնիկ. շուտուց հողածինի միս չենք կերեր ի։

Տղեն էր, թռավ, հ'ելավ կայնավ դևի հ'առեջ, ըսեց.— Կի՛ր, նոր գոհացի։

Դևն է, ըսեց.—Տղա՛, գուրզն ի՞մն ա, թե՞ քունն ա։

Տղեն էր ըսեց.— Ես իմ էկե քու հողի մեջ՝ գուրզ քունն ա։

Դևն էր գուրզ թալեց, տղեն էր, գուրզի միջեն թռավ հ'ելավ։

Թուր ու թամքն էր քաշեց թուրն ու հասավ դևին. խիմա՜-խիմա՜ բրգեց, լցեց էտտեխ։ Յոթ անգամ էլի շարեց ղայիշն էկավ։ Էղավ տասնչորս անգամ տղի խայիշից կախ։ Տղեն էր, էկավ տուն, անդճներ տվեց ախճկան նշանց, ախճիկն ուրխըցավ։

Նստան՝ կերան, խմին ու հ'ելան քնան։ Տղեն էր, թուր քաշեց, ղրեց էլի ուրն ու ախճկա արանքը։

Ախճիկն էր, ըսեց.— Տղա՛, իմ խորոտութենին չըս հավնի՛, իմ դեմքին չըս հավնի՛, հ'ո՞րի թուրը կը քաշիս դնիս իմ արանքն ու քու արանք։

Տղեն էր, ըսեց.— Ախճի՛, մուրազ ունիմ՝ կը կատարիմ։ Հանեց միջնեկ ախպոր մատնիք, իսկեց ախճկա մատ։

Սարախտան էր, հ'ելավ տղեն ըսեց.—Ախճի՛, էն ի՞նչ օթախ ա կէրևա։ Ախճիկն էր, մտածավ, ըսեց. «Ըսիմ, թե՞ չըսիմ։ Էն իմ պզտի քուրն ա. էնի ընձնե խորոտ ա. ըսի՛մ կէթա, կառնե ընդրան։ Է՞..., ջայնամը, ըսիմ, թըխ էթա»։

Ըսեց.— Էնի իմ պզտի քուրոջ, Օսկեծամի տունն ա։ Թուր ու թամքն էր բարև մնա էղավ ու գնաց ախճկա կշտեն։ Գնաց տեսավ օր, հանդա մե հատ ախճիկ նստե բալկոնի հով, ձեռ դրե ճակտին՝ կիշկա սար ու ձոր։ Ախճիկն օր մե վերսի վրա տղին տեսավ, էկավ փաթթվավ տղին, առավ գնաց տուն։

Վա՜յ տղա, ըսեց.— Մկա Կարմիր դևն օր էկավ, քզի ասիմ ի՞նչ էնա։ Տղեն էր ըսեց.—Հլա Սև դևի անդճներն ու Բոզ դևի անդճները տե՞ս, էն լե էն ճամփով կը տանիմ։

Ախճիկն էր ըսեց.—Տղա՛, Սև դևն ու Բոզ դևը ջոջցած են, չը կրցած վըրետի, էտիկ չհել ա։ Ըսեց.— Տղա, իտա Կարմիր սարը կը տեսնա՞ս, էդ Կարմիր սարով կիգա։ Էն օր քզի տեսավ, ընդրա բերնեն կրակ կը ցխի։ Կէթաս մե հատ ջոջ քարմ՝ կա, քզի տու էտ քարի տալտեն. օր կրակ ցխավ, կը ցխի քարին, դու գելնիս դևին կըսպանիս ու կիգաս։

Տղեն էր, թուր քաշեց, աստված կանչեց ու ընկավ կարմիր ճամփեն։ Գնաց տեսավ օր հանդա մե ջոջ քար կա։

Դևն տեսավ տղին, ըսեց.— Օ՜, ջուն ու ջանավարներ, էսօր ձզի պռաղնիկ, ջուտուց հողածնի միս չընք կերեր ի, ատրմներս կէռվըզտա։

Օր ըսեց ատրմներս կէռվըզտա, կրակ ցխավ բերնեն, առավ քարին, տղեն ուրին թալեց քարի տալտեն, թուր քաշեց, հ'ելավ

կայնավ դևի հ'առեջ։ Ըսեց.— Դև,— ըսեց,— դուրդն իմն ա, թե՞ քունն ա։

Ըսեց.— Տղա՛, գլխուդ, արևուդ դուրբան, դուրդն քումն ա։

Տղեն էր, թուր քաշեց ու դևի վիզ կտրեց, յոթ անգամ լե շարեց խայիշն ու էկավ։

Էկավ տուն, տվեց Օսկեծամին նշանց։

Օսկեծամն էր, ուրխըցավ, հ'ելավ պատրաստութուն էրեց։ Թուր ու թամքն էր ըսեց.— Օսկեծամ, դու իմն էս, ես էլ քում։ Հ'ելան քնան։

Սաբահտան էր, լուս բացվավ վեր ուրանց։ Տղեն էր, հ'ելավ ըսեց.— Օսկեծամ, ես կէթամ ավ ու խուշ էնելու։

Ախճիկ լե ըսեց.— Տղա՛, գնա, ես լե կէթամ հավուզ լողկնալու։ Ախճիկն էր, հ'ելավ գնաց նստավ, գլոխ լվաց։ Ախճկա ծամերն էր ոսկի. ժըժներ էր։ Սանտրեց, պուրակըմ թալեց հավուզի մեջ։ էտ պուրակ ծամն էր, գնաց կռապաշտ թագավորի հավուզին դուշ էկավ։ Թագավորն էր, ըսեց ուր վազիր-վաքիլներուն.— Տարեք ձիանք ջրեք։

Վազիրներն էր, տարան ջրելու։ Ձիանք խրտնան, ջուր չը խմեցին։ Իշկեցին հավուզ, տեսան օր մեկ բան կը փիսպլտա։

Գացին ըսին.— Թագավոր, մեկ բան կա ջրի մեջ, էնի կը փիսպլըլտա՝ ձիանք ջուր չըն խմի։

Կռապաշտ թագավորն էր ըսեց.— Տարեք մե հատ լողվոր թալեք թըխ հանա։

Հ'ելան լողվորին բերեցին՝ հանեց, հանեց, ի՞նչ հանեց՝ մեկ պուրակ օսկեծամեր։ Բերին տվին կռապաշտ թագավորին նշանց։

Թագավորն էր ըսեց.— Որն օր իդրա տիրոջ գտավ, բերեց ընծի կնիկ՝ ուր կշռանով օսկի կիտամ։

Մեկ լե տեսավ ձրձում հեծնող պառավ էկավ ըսեց.—Թագավոր ապրած կենա, ես կէթամ բերիմ՝. հմա պըտի իմ կշռանով ու ձրձմի կշռանով օսկի տաս։

Կռապաշտ թագավորն էր, ըսեց.— Լա՛վ, նանե, գնա բի՝ ես կիտամ։

Նանեն էր, օձ էրեց խարձան, զարկեց ձրձմին ու գնաց։ Գնաց մե հատ ծովու ափ։ Ձրձում պահեց ավզներու մեջ, ձեռ դրեց ծոցն ու նստավ ճամփու խրազ։

Թուր ու թամքն էր ավ ու խջի տեղեն էկավ, տեսավ ըսավ.— Նանե ջան, հ'ընչի՞ ես նստե ճամփու վրեն իտա մթնուն։

— Օ՞ֆ, բալա ջան, նստեր ես ճամփու վրրեն. իմ ընկերտանք գացած են Հ՝երուսաղեմ, գան հ՝ելլիմ էթամ։

— Նանե ջան, ել էթանք մեր տուն, լուսնա նոր էլի դնա։

— Դը՛ քել էթանք, բալա ջան։

Գացին հասան։ Օսկեծամ հանդա կայնուկ ա՝ դուռ։

Կրսա.— Վա՜յ, մա՛րթ, ընդրան բերեցիր, ըղրուց մրզի վնաս կիդա։

Կրսա.— Է՛, կնիկ, պառավ կնիկ ա, ի՞նչ վնաս պրտի տա։

— Դե լավ, չի դա, չի դա, բի՛ տուն։

Թուր ու թամքն էր, հ՝ելավ դուս։

Պառավն էր ըսեց.— Ան լուսուն օր ես գացի, քու մարթ լե կէթա ավ ու խուշ էնելու։ Գոյնա քու մարթ ուր հոգու տեղն ըսա, օր դու խաղաս հետ՝ չուր ինքը դա։

Օսկեծամն էր, բեյնրն մրտավ։ Նիյաթ կախեց ու նստավ։

Թուր ու թամքն էր, դռնեն մտավ, ըսեց.— Օսկեծա՛մ, ընչի՞ ես նիյաթ կախե։

Կրսա.— Ի՞նչ էնիմ նիյաթս ի չը կախիմ. դու լուսուն կէթաս ավ ու խուշ, նանեն էլ ղրթի կէթա ուրանց գեղ, քու հոքու տեղ չրս ըսե օր ես խաղամ՝ չուր դու գաս։

Կրսա.— Լա՛վ, կնիկ, գիշեր օր պառկանք, ես գողտու իմ հոքու տեղ քըղի կրսեմ։

Պառվու տեղ տարան թալեցին հեռուն։

Իրիկն ու կնիկն էր, հ՝ելան քնան։ Թուր ու թամքն էր ըսեց.— Կնիկ, դինա՞ս իմ հոքին դորն ա։ Ավելն ա իմ հոքին, կնիկ։

Կնիկն էր, ըսեց.— Իյա՜, ավել լե էղնի՞։

Պառավ լե անգաճ կէնա։

Թուր ու թամքն էր ըսեց.— Կնի՛կ, իմ հոքին պզտիկ թուրմ ա, իմ քամկի օրթլաղ զարկուկ ա։

Կնիկն էր, ըսեց.— Մարթ, օր քաշիմ քամկիդ օրթըլըղեն կը մեռնի՞ս։

— Բա ի՛նչ կէղնիմ, կնիկ։

— Ջայնըմին, չըմ քաշի։ Օր դու կը մեռնիս, ես էլ հ՝ո՞րի կը քաշիմ։

Իրիկն ու կնիկն էր, փաթթվան իրարու ու քնան։ Պառավն էր, հ՝ելավ էկավ, յորդնու տկեն գողտուկ ձեռ տարավ տղի քամակ՝ թուրը քաշեց, տղեն մեռավ։ Պառավն էր, վռազ, վռազ բերեց թուրը թալեց ծովու մեջ։ Թուր գնաց, գնաց ծովու մեջ խրթվավ մառմառ քարի մեջ։

Պառավ դարձավ էկավ տուն, Օսկեծամին հ'իմցուց։ Մամեր փաթթեց թևին, օր Օսկեծամին թալա շլակ, ըսեց.— Թուր ու թամք հ'ելի, ընծի տարավ, Թուր ու թամք։

Պառավն էր, ըսեց.— Քելա, Թուր ու թամքն մեռեր ա։

Ախճիկն էր, յորղան տարավ դեն՝ օր մեռեր ա։ Պառավն էր, ըսեց.— Դե՛, քել էթանք, էլ ի՞նչ կէնիս։

Օսկեծամն էր ըսեց.— Անաստվա՛ծ, կայնի դնամ թաբուտ, ծաղկներ վերեն շախ տամ, դնամ խազ բաղչեն նոր էթանք։

Ախճիկն էր, տղին դրեց թաբուտի մեջ, չարսափ քաշեց վրեն, տարավ դրեց խազ բախչեն՝ լալով դարձավ էկավ։ Պառավն էր, ախճկան թալեց շլակ, էկավ թըխ ծովու կուշտ։ Ձձումն էր, հանեց ավզներու միչեն, ախճկան բլուլեց դրեց մեջ ու քշեց, էկավ կռապաշտ թագավորի դուռ կայնեց։ Ախճկանն էր, ձձմի միչեն հանեց։

Թագավորն էր, տեսավ ախճկան ու ըսեց.— Օ՛, իմ սինոտքներուն մեջ էտմալ ախճիկ չկա։

Ախճիկն էր կայնավ ըսեց.— Հայրի՛կ, ընծի վի՞ր համար եք բերե։

Ըսեց.— Իմ համար ենք բերե։

Ըսեց.— Օր քու համար ա բերած ա, բերանդ հլա բաց։ Մատ պըտտցուց, մե հատ ակռա չկար։

Ախճիկն էր, ըսեց.— Ընծի տարեք դրեք մե հատ օթախ, չուր քառասուն օր դզի, իմ կուշտ մարթ չիգա։

Ախճկան էր տարան դրին օթախ։ Ախճիկն էր, մեկ ձեռ առավ թուր, մեկ լե աղու ու կայնավ։

Խաբար տանք Թուր ու թամքի էրկու ախպոր։ Էրկու ախպերներ հ'ելան շարունակեցին ուրանց ճամփեն ու էկան։ Էկան տեսան օր հանդա ախպեր մեռուկ, բախչեն դրուկ։

Ըսին.— Էթանք գամըշլուն հարցունք։

— Գամըշլի ախպեր, հ'ըսօր գիշեր ըսկի բան չը՞ բերած թալած ծովու մեջ։

Գամըշլին էր ըսեց թե.—Մե հատ պառավ թուր բերեց թալեց ծովու մեջ։

Ախպրտանք լե ըսեցին.— Օ՛, ախպեր, մեկս դարբին, մեկս լե լողվորլի ա, լողվորլի ախպեր իտա շըրիտ կիտամ ձեռտի, մտի ծով։ Ծովու մեջ գաշա, թուրն կը գտնես։

Լողվորլի ախպերն էր, մտավ դաշեց՝ տեսավ օր քառսուն գազանոց քարի մեջ խըտվուկ ա։ Ջրի մեջեն բոռաց.— Դարբնլի ախպեր, քաշա՛։

Դարբնչի ախպերն էր քաշեց, թուր մառմառ քարի միջեն հանեցին։ Տարան խաղ բաղչեն. ախպոր քամակ ղարկեցին։ Ախպեր հ'ելավ նստավ։

— Է՛յ վախ, ինչքա՞ն եմ քնե։

— Հա քներ իս, բա քու Օսկեծամ կնիկդ հ'ու՛բա։

Թուր ու թամքն էր, հ'ելավ ըսեց.—Ախպրտանք, էն էրկու օթախն կը տեսնա՞ք, էնի ջոջ քուրն ու միջնեկ ախճիկն են. հոնիկ ջոջ ախպեր՝ ջոջ ախճիկն կառնիս քզիկ, միջնեկ ախպեր՝ դու լե միջնեկ ախճիկն կառնիս։ Իմ օթխներուն լե մուղաթ կենաք՝ չուր ես էթամ ու գամ։

Բաբամնա էղավ ու գնաց։ էն օր հասավ քաղքին, Օսկեծամին նոր կտանեն պսակ։

Գնաց ըսեց.—Նանե, էտ ի՞նչ դհոլ զուռնա յա։

— Օ՞, բալա ջան, դարտիս վաղն արի։

Կըսա.—Չէ՛, նանե... Ըսա հասկնամ էտ ի՞նչ պսակ ա։

Ըսեց.— Բա՛լա ջան, մե հատ Թուր ու թամք ջհել տղեմ էր. դացե դևին մորթեր էր, մե հատ Օսկեծամ կնիկ էր առեր էր։ Կռապաշտ թագավորն էր, մե հատ պառվու սովըրցուց, ըսեց. «Գնա Թուր ու թամքին ըսպանա, Օսկեծամին բի ընծի կնիկ»։ Հ'ըսօր ընդրա պսակն ա։

Կըսա.— Նանե՛, քզի ըսկի տղա, բան չկա՞։

Կըսա.— Կա՛, բալա ջան, մե հատ ժիր տղա ունիմ՝ վիր վզին օր մե սիլա թալեց, վիզ մե յան կընկնի, ջանդակ՝ մե յան։

Կըսա.— Նանե, ես էն Թուր ու թամքն եմ, առ իմ մատնիք, էսկա քու մատ, գնա Օսկեծամի ակուշկի դեմ կայնի, ըսա. «Դենե՛ք, գե՛նեք, ես էն պառվներուց չիմ»։ Օսկեծամն օր մատտ ի մատնիք տեսավ, էնիկ կը ճանչնա, կըսա. «Թողեք թըխ գա ներս»։

Թագավորն ա գելնի կըսա.— Ի՞նչ պառավ իս։

Մատն ա կը տնկա Օսկեծամի յան, կըսա.— Ես էն պառվներուց չիմ։

Օսկեծամն ա կըսա.— Թողեք թըխ գա ներս, ըսեց.— Վա՞յ, նանե, քու օտներուն մեռնիմ, ըդրա տերն դո՞րա։

Կըսա.— Բալա ջան, մեր տունն ա։

Կըսա.— Բը իմա՞լ էնիս օր գա էտ տղեն ես տեսնամ։

Կըսա.— Բա՛լա ջան, ընծի մե հատ տղա կա, շատ ուժեղ ա՝ թագավոր ընդուց կը վախենա։ Կէթամ իմ տղին կըսիմ թե՝ «էդիկ քու պզտիկ ախպերն ա». էնիկ կէթա կըսի. «էդիկ իմ պզտիկ ախ-

պոր կնիկն ա»։ Ժողովուրթ կը վախենան իմ աղից, կըսա. «Օր քու ախպոր կնիկն ա՝ կը հասնի քու ախպոր»։

Պառավն էր դարձավ էկավ տուն՝ Թուր ու թամքին ըսեց.— Գովընդ կը քաշին, գնա խաղցի։

Թուր ու թամքն էր, ղարվավ-զարդրվավ ու գնաց գովընդի մեչ, բռնեց գովընդն ու քաշեց։ Պառվու տղեն էր, չիմցավ օր էդի ուր տան խոնախն էր՝ տարավ բերեց սիլեն ու տղի վզին։ Սկի պապիլոգն էլ տղի բերնեն չընկավ։ Նագանն էր, տըփեց գետին, նիյաթ կախեց, գնաց տուն։

Պառավն էկավ ըսեց.— Բալա ջան, ընչի՞ ես նիյաթդ կախե նստե։

Ըսեց.— Օ՜վ նանե, իմ դարդես վազն արի։ Հ'ըմընու վրզին կը զարկենք՝ վիզ ուրանց թըռներ. մե տղա էկավ զարկի՝ պապիլոգն էլ բերնեն չը թռավ։

Ըսեց.— Վա՜յ, բալա ջան, էնիկ քու պզտիկ ախպերն ա։

Տղեն լը կըսա.— Օր իմ ախպերն ա, դո՞ր էր գացե չուր մկա։

Կըսա.— Պզտիկ վախտ դու ու էնի ճան խաղցաք, խռովավ գնաց։ Մըկա էդ Օսկեծամ քու ախպոր կնիկն ա։

— Օ՜, նանե, դը հըմա՛լ ըսա է՞։

Թուրն ու խանչալ առավ ու հ'ելավ գնաց թըխ կռապաշտ թագավորի յան, ըսաց.— Ժողովուրթ լսե՛ք, մեկ բան ըսեմ։ Իմ ախպեր գացե մե հատ դևի ըսպանե, էդ ախճիկ խըլե ձեռնեն։ Մըկա կռապաշտ թագավորին կը հասնի էդ ախճի՞կ, թե՞ իմ ախպոր։—է՞, ոչ թե ժողովուրթ վախեցան տղից, թագավոր լե վախեցավ։

Ըսեց.— Ոչ թե ժողովուրթն, ես իմ ձեռով՝ Օսկեծամին կիտամ քու ախպոր։

Օսկեծամին էր, տնից հանին, բերին տվին Թուր ու թամքին, տարան ժամ պսակ։ Առան էկան պառվու տուն։ Յոթն օր, յոթ գիշեր հարսնիք էրեցին։

Աստծուց իջավ իրեք հատ խնձոր. մեկը՝ ըսողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ գրողին։

Ընդոնք հասան ուրանց մուրազին, ղուք լե հասնիք ձեր մուրազին։